5. Դատարանի իրավական վերլուծությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված պահանջին:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ հայցը մերժելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված: Միաժամանակ Դատարանն արձանագրում է, որ սույն գործով այլ դատական ծախսեր առկա չեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 179-րդ, 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ և 198-րդ, ինչպես նաև 27.2-րդ գլխի կանոններով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Մեգա-Սվետ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, պատասխանող կողմում ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի՝ ՀՀ պաշտպանության նախարարության՝ կարիքների համար հեռադիտակների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ ՀՀ «ՊՆ-ԲՄԱՊՁԲ-23-5/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Վճիռը ուժի մեջ է օրինական ուժի մեջ մտել 30.10.2023 թվականին